



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 5 ԱՊՐԻԼ, 2021

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՇՆՈՐՀՔ ԸՐԷՆ ՈՐ ՃԱՆՁՆԱՄ ՕՐԷՆՔԻ

Ահա մահուան դուռը հասած եմ.
Կեանք Կուր ինձի, քու խոստումիդ համաձայն:
Վարքս քեզի պատմեցի, եւ ուղղութիւն Կուր ինձի.
սորվեցուր ինձի քու կանոններդ:
Տուր որ հասկնամ հրահանգներուդ իմաստը,
եւ խորհրդածեմ սքանչելի գործերուդ մասին:
Տրամութեան արցունքները վիս կը խեղդեն.
վորացուր վիս, քու խոստումիդ համաձայն:
Նենգ միջոցներէն հեռու պահէ վիս,
եւ շնորհք ըրէ՝ որ ճանչնամ քու Օրէնքդ:
Ճշմարտութեան ճամբան ընտրեցի,
եւ վճիռներդ դարձուցի ուշադրութեանս առարկան:
Պատուիրաններուդ հաւատարիմ մնացի, Տէր,
վիս ամօթով մի՛ ձգեր:
Պատուէրներուդ պահանջած ձեռով կ'ընթանամ ահա,
որովհետեւ դուն իմ միտքս լայն բացիր:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնայ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ



ԱՌԱԿԱՑ

ԱԲԵԼԻ ԶԳՈՒՇԱՅՈՒՄ (6:1-19)

Ինչպես նախապես ըսուեցաւ, որ ամբողջ Աստուածաշունչը, եւ ի մասնաւորի Առակաց գիրքը, ուրիշ բան չէ եթէ ոչ ուղղութիւն փալու մարդ արարածին ինչպէս ապշելու այս ժամանակաւոր երկրաւոր կեանքը: Զգուացումը, արթուն եւ պարբաստ ըլլալը, ու մանաւանդ աստուածային իմաստութեան առաջնորդուիլը անհրաժեշտ ու կարեւոր փութալներէն մէկն է այս կեանքը ըստ այնմ ապրելու, որպէսզի աւարտին արժանի ըլլայ յաւիտենական կեանքին: Ահա այդ իսկ իմաստով Առակաց գիրքը կը շարունակէ մէկ այլ ուրիշ փարբերակով մը առաւել զգուշացնելու մկարդուն ըստ այնմ ապրելու կեանքը:

6-րդ գլուխը 1-19 համարներով կը ներկայացնէ հետեւեալ զգուշացումը.

1-5 համարները լեզուի զգուշացում:

6-11 համարները ծուլութենէ զգուշացում:

12-19 համարները չար մարդոցմէ զգուշացում:

«Որդեակ իմ, եթէ քու բարեկամիդ համար երաշխաւոր եղար, կամ օտար մարդու համար գրաւ դրիր, քու բերնիդ խօսքերովը որոգայթ ինկար»: Այսպէղ կի զգուշացնէ ու կը ներկայացնէ լեզուի գործածութիւնը, որովհետեւ նոյն այն լեզուն է, որուն համար կ'ըսէ Առաքեալը, որ ամբողջ անփառ մը կ'այրէ: Այս պարագային ալ եթէ խոստացար, այդ խոստումդ կարարելու համար դուն քեզ դակարդը ձգած կ'ըլլաս: Եթէ ի վիճակի ես օգնելու եւ յանձն առնելու բարեկամիդ եւ կամ օտարակնին պարտքը, շար աղէկ, բայց եթէ ի վիճակի չես, բայց կը խոստանաս երաշխաւորել կամ գրաւ դնել, այն ատեն դուն պարտական կ'ըլլաս: Նաեւ հոգեւոր իմաստով եթէ երաշխաւոր եղար որեւէ մէկուն նաեւ պարտական ես, ինրպէս պիտի ըսէ Տէրը Եզեկիէլ մարգարէին. «Քեզ դէպ կացուցի, այսինքն՝ դիտող, եւ եթէ չզգուշացնես, քեզմէ պիտի պահանջեմ»: Ուստի, որպէսզի այդպիսի թակարդի մէջ չինաս, աւելի լաւ է նախ պարտիրանը լսես եւ կարարես, ապա եղնիկի նման դուն քեզ ազարես այդ թակարդեն:

Յաջորդ բաժինը, ծուլութենէ զգուշացում, որուն համար ալ կը թելադրէ որ երթայ մշինին, եւ անկէ տրվի ինչպէս կ'աշխատի: Թեպէր մշինը աննկար, փկար միջար որպէսզի, բայց անոր մէջ կայ իմաստութիւնն ու աշխատասիրութիւնը, թէ ինչպէս ամբողջ ամառ կ'աշխատի, որպէսզի ապահովի իր ձմեռուան պաշարը: Նոյնպէս ալ մարդու պարագային, ծուլութիւնէ զգուշացում, որովհետեւ ծուլութիւնը քեզ աղքատութեան կ'առաջնորդէ, այս պարագային աղքատութիւնը նաեւ հոգիի: Ծուլութեան պարճառով նաեւ մարդս կ'առաջնորդուի մեղքի ու չարութեան: Նաեւ աշխատասիրութիւնը ոչ միայն երկրաւոր այս կեանքին համար, այլ նաեւ գալիքին: Ինչպէս Քրիստոս առիթով մը նոյնը պիտի ըսէր. «Ձեզի համար գանձեր դիզեցէք երկինքի մէջ»: Նախ աշխատասիրութիւնը, յետոյ այդ աշխատանքին արդիւնքը որպէս երկնքի համար գանձեր դիզուած: Եւ ապա, աղքատութիւնը ճամբորդի պէս, որ կը նշանակէ անակնկալօրէն, իսկ կարօտը, պէտքն ու անհրաժեշտութիւնը սպառազինեալ մարդու պէս, որ կը նշանակէ անդիմադրելի է այլեւս:

Ի վերջոյ, 12-19 համարները կը ներկայացնէ այս անգամ ոչ միայն ծուլութիւնը, այլ՝ չար գործը: Մի գուցէ ծոյլ չէ, բայց չար գործ ընող է, որմէ կը զգուշացնէ: Հեփաքրքրական արդայարութիւններով կը ներկայացնէ այդպիսին, ծուլ բերան, որ կը նշանակէ շիփակ չի խօսիր, այսինքն՝ սրախօս: Ուրքերով խօսիլ, որ կը նշանակէ ըրածի մասին չի խօսիր, այլ մտքին եղածը կը գործադրէ: Մարներով կը սրովեցնէ, որ կը նշանակէ անոր գործերը յետոյ կը բացայայտուին, ցոյց կու փան իր ըրածները: Անոր սրտին մէջ ծուռութիւն կայ, միշտ չարութիւն կը հնարէ ու կռիւներ կը հանէ: Բայց անոր կորուստը յանկարծ պիտի գայ, ու անիկա դարման պիտի չունենայ: Կը նշանակէ, նախ անիկա անպայման աւարտ պիտի ունենայ, անոր աւարտը յանկարծ փեղի պիտի ունենայ, եւ յանկարծ փեղի ունենալը, կը նշանակէ, առիթ պիտի չունենայ դարձի գալու, ապաշխարելու, անոր համար ալ դարման պիտի չունենայ:

Իսկ 16-19 համարներով կը ներկայացնէ այն ինչ որ Աստուած կը զգուի ու պիղծ են; ամբարտաւան ացք, սրախօս լեզու, անմեղ արիւն թափող ձեռքեր, չար խորհուրդ հնարող սիրտ, չարութիւն ընելու համար՝ առագ վազող ուրքեր, սրտութիւն խօսոց անիրաւ վկայ, ու եղբայրներու միջեւ կռիւներ ցանող մարդ: Խորքին մէջ այս բոլորը Չարին նկարագիրը ցոյց փուող երեւոյթներն են, այլ խօսքով՝ Քրիստոսի բացարարութեամբ «Դուք ձեր հօրը գործը կը շարունակէք»: